Իրավիճակը Տավուշի մարզի աշխատաշուկայում

(2022 թ.մայիսի 1-ի դրությամբ)

2022թ.-ի հունվարի 1-ի դրությամբ աշխատանք փնտրողների թիվը Տավուշի մարզում կազմում է շուրջ **5.7 հազար մարդ:** Գործազուրկների թվաքանակը կազմում է աշխատանք փնտրողների 75.9%-ը կամ 4.3 հազար մարդ: Այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 1.9%-ով: Գործազուրկ կանանց թիվը կազմում է գործազուրկների թվի 59.1%-ը, կամ 2.5 հազար մարդ: Գործազուրկի կարգավիճակ ունեցողների 17.7%-ը երիտասարդ է, 3.9%-ը հաշմանդամություն ունեցող անձ, 52.9 %-ը՝ գյուղաբնակ[1]:

Իրավիճակը	2021թ.	2022թ. հունվարի 1-ի դրությամբ		2022թ. մայիսի 1-ի դրությամբ
Աշխատանք փնտրողների քանակը	6100	**5700**		4900
Գործազուրկների քանակը **Այդ թվում՝**		**4300**	75.4%	
Գործազուրկ տղամարդկանց քանակը				1600
Գործազուրկ կանանց քանակը		**2500**	58.1%	2400
Գործազուրկ երիտասարդների քանակը (16-29 տրեկան)		**761**	17.7%	
30-44 տարեկան գործազուրկների քանակը		**2013**	46.8%	
45-54 տարեկան գործազուրկների քանակը		**813**	18.9%	
55 տարեկանից բարձր տարիքի գործազուրկների քանակը		**714**	16.6%	
Գյուղաբնակ գործազուրկների քանակը		**2275**	52.7%	
Որակավորում չունեցող գործազուրկների քանակը		**671**	15.6%	
Տարեսկզբից աշխատանքի են տեղավորվել	601			210

Աշխատանք փնտրողների և գործազուրկների թվաքանակն ըստ Տավուշի մարզի տարածքային կենտրոնների (2021թ.-ի 2-րդ կիսամյակ)

Իրավիճակը	Իջևան	Նոյեմբերյան	Բերդ	Դիլիջան	Ընդ.
Աշխատանք փնտրողների քանակը	1690	1492	498	1986	**5666**
Գործազուրկների քանակը	1553	746	416	1583	**4298**
Աշխատանքի տեղավորվածները (2021թ.-ի 2-րդ կիսամյակում)	176	171	140	114	**601**



[1] Աշխատանքի սոցիալական հարցերի նախարարություն, Զբաղվածության պետական գործակալություն

Աշխատանք փնտրողների թվաքանակն ըստ մարզերի 2021-2022թթ. /մայիսի 1-ի դրությամբ/[2]



2022թ.-ի տարեսկզբից աշխատանքի տեղավորվածների թվաքանակն ըստ ՀՀ մարզերի



Ըստ զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի զարգացման վարչության տվյալների ՀՀ-ում <u>գործազուրկների</u> թվաքանակում շարունակում են <u>մեծ թիվ կազմել.</u>

- <u>բարձրագույն կրթությամբ</u> հումանիտար գիտությունների, կրթության և մանկավարժության, տնտեսագիտության և կառավարման մասնագետները,
- <u>միջին մասնագիտական կրթությամբ</u> կրթության, առողջապահության, տնտեսագիտության և կառավարման, սպասարկման ոլորտի մասնագետները,
- <u>նախնական մասնագիտական կրթությամբ</u> արվեստի և դիզայնի, էկոնոմիկայի և ղեկավարման, տրանսպորտային միջոցների, թեթև արդյունաբերության որոկավորում ունեցող մասնագետները:

Վիճակագրական կենտրոնի տվյալներով <u>Տավուշի մարզում</u> ըստ կրթական ցենզի **հետբուհական և բարձրագույն կրթություն** ունեցողների թիվը կազմում է գործազուրկների թվի **11.8%-ը:** Գործազուրկների թվաքանակում հիմնականում մեծ թիվ են կազմում բարձրագույն կրթությամբ՝ ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, հումանիտար գիտությունների մասնագետները, կրթության և մանկավարժության, մշակույթի և արվեստի, տնտեսագիտության և կառավարման, սպասարկման

[2] Զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի զարգացման վարչություն

ոլորտի մասնագետները: Կարելի է ենթադրել, որ աշխատաշուկայում այս մասնագիտությունների պահանջարկ չկա, կամ մարդկանց որակավորումները կամ վարձատրության չափը անհամապատասխան են, կամ էլ գործազրկության այլ պատճառներ կան:

Նաև պետք է նշել, որ Զբաղվածության պետական գործակալության տվյալների գործակալությունում **գրանցված գործազուրկների կեսից ավելին մասնագիտություն չունի**[3]:

Ըստ այդ գործակալության ուսումնասիրությունների մարզերի երիտասարդները (այդ թվում նաև Տավուշի Մարզի) շարունակում են հիմնականում նախապատվություն տալ **հումանիտար գիտություններին, կրթության, տնտեսագիտության և կառավարման ոլորտի մասնագիտո-թյուններին՝** սովորելով տեղական բուհերում, որոնց պարագայում մեծ է գործազրկության մակարդակը և գրեթե բացայակում է պահանջարկը մարզային աշխատաշուկաներում:

Ըստ գործատուների կողմից Զբաղվածության տարածքային կենտրոններին (ՏԿ-ներին) ներկայացված թափուր աշխատատեղերի վերաբերյալ հայտերի **Տավուշի մարզում** հիմնականում պահանջված են.

- **բարձր որակավորման մասնագետներ**- առողջապահության բնագավառի մասնագետներ (բացառությամբ բժշկական խնամքի և մանկաբարձության), ուսուցիչներ:
- **միջին որակավորման մասնագետներ**- բժշկական խնամքի և մանկաբարձության աշխատողներ (օժանդակ անձնակազմ), նախադպրոցական դաստիարակության և կրթության **դասավանդողներ**, ոստիկանության աշխատակիցներ, խուզարկուներ:
- **սպասարկման ոլորտի աշխատողներ**- տնային տնտեսության վարման ծառայություններ մատուցողներ (սպասարկողներ), հանրային սննդի կազմակերպությունների աշխատողներ, խանութների վաճառողներ, ապրանքների ցուցադրողներ, սննդի արդյունաբերության բանվորներ:
- **Օպերատորներ, ապարատավարներ և մեքենավարներ՝** մանածագործվածքի (տեքստիլի), կաշվի, մորթու վերամշակման և դրանցից իրերի արտադրության սարքավորումների,
- Որակավորում չպահանջող աշխատատեղերը կազմում են ներկայացված թափուր աշխատատեղերի **15.6 %**-ը:

Ըստ ուսումնասիրությունների բոլոր մարզերում զբաղվածներն աշխատուժի մոտավորապես **50 տոկոսն** են կազմում, ընդորում զբաղվածների **40%-60%-ը ոչ ֆորմալ զբաղվածության ոլորտում են:** Ոչ ֆորմալ զբաղված մարդկանց ամենամեծ թիվը Տավուշում է, իսկ ամենափոքրը՝ Գեղարքունիքում:

Ուշադրություն. *Ոչ ֆորմալ զբաղվածության մեջ ներառվում են. (ա) գործատուի հետ բանավոր համաձայնությամբ վարձու աշխատողները (այդ թվում՝ տնային տնտեսությունում վճարովի աշխատողները՝ այգեպան, դայակ, սպասուհի, վարորդ, պահակ և այլն), (բ) չգրանցված կազմակերպությունների սեփականատեր գործատուները և ինքնազբաղվածները, (գ) առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները և (դ) չգրանցված արտադրական կոոպերատիվների անդամները: Ոչ ֆորմալ զբաղվածներ են համարվել նաև տնային տնտեսությունում բացառապես սեփական վերջնական սպառման համար ապրանք արտադրող առանց վարձատրության աշխատող ընտանիքի անդամները, եթե արտադրված արտադրանքը նշանակալի մասնաբաժին է ունեցել տնային տնտեսության ընդհանուր սպառման մեջ:*

[3] Զբաղվածության պետական գործակալություն, Աշխատանքի պահանջարկն ըստ շուկայի ոլորտների (Լոռու, Տավուշի, Շիրակի, Գեղարքունիքի մարզեր)

Ուսումնասիրված բոլոր մարզերում զբաղված մարդկանց մեծամասնությունն աշխատում է **գյուղատնտեսության ոլորտում** և իրեն գյուղատնտեսական ոլորտի որակավորված աշխատող է համարում (հիմնականում ինքնազբաղված), այնուհետև հաջորդում են համեմատաբար մեծ թիվ կազմող **սպասարկման և վաճառքի ոլորտի** աշխատողները և բարձր որակավորման մասնագետները (**ուսուցիչները**): Ավելի փոքր թիվ են կազմում ոչ գյուղատնտեսական ոլորտի որակավորված աշխատողները, միջին որակավորման մասնագետները, որակավորում չունեցող աշխատողները:

2022 թ. հունվարի 1-ի դրությամբ Տավուշի մարզում իրականացված ծրագրեր

	Ծրագրի անունը	**Շահառուների քանակը**
1.	«Ձեռք բերված մասնագիտությամբ **մասնագիտական աշխատանքային փորձ ձեռք բերելու համար** գործազուրկներին աջակցության տրամադրում»	**30**
2.	«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին միանվագ փոխհատուցման տրամադրում»	**43**
3.	«Ռազմական դրությամբ պայմանավորված՝ Ադրբեջանի կողմից 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ-ում գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների աշխատանքային փորձ ձեռք բերելու համար աջակցության տրամադրում»	**27**
4.	«Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ (տավարաբուծությամբ, ոչխարաբուծությամբ, խոզաբուծությամբ, այծաբուծությամբ, թռչնաբուծությամբ) զբաղվելու համար աջակցության տրամադրում»	**69**
5.	«Գործազուրկների, աշխատանքից ազատման ռիսկ ունեցող, ինչպես նաև ազատազրկման ձևով պատիժը կրելու ավարտին մինչև վեց ամիս մնացած»	**8**
6.	«Աշխատաշուկայում անմրցունակ ազատազրկման վայրերից վերադարձած, հաշմանդամություն ունեցող, ինչպես նաև «հաշմանդամություն ունեցող երեխա» կարգավիճակ ունեցող անձանց աշխատանքի տեղավորման դեպքում գործատուին աշխատավարձի մասնակի փոխհատուցման և հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի համար դրամական օգնության տրամադրում»	**3**
7.	«Մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող աշխատանք փնտրող անձանց՝ մինչև երեխայի երկու տարին լրանալը աշխատանքի վերադառնալու դեպքում երեխայի խնամքն աշխատանքին զուգահեռ կազմակերպելու համար աջակցության տրամադրում»	**59**
8.	«Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում»	**156**
9.	«Աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող մայրերի համար գործատուի մոտ մասնագիտական ուսուցման կազմակերպում»	**9**
10.	«Ռազմական դրությամբ պայմանավորված՝ վարձատրվող հասարակակական աշխատանքների կազմակերպման միջոցով՝	**9 (Նոյեմբերյան,**

	Ադրբեջանի կողմից 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի ՀՀ գտնվող Արցախի Հանրապետության գործազուրկ քաղաքացիների ժամանակավոր զբաղվածության ապահովում»	**Դիլիջան)**
	Ընդամենը՝	**413**

<u>Աղբյուրներ.</u>

1. Զբաղվածության ապահովման և աշխատանքային ներուժի զարգացման վարչության տվյալներ, https://employment.am/am/439/LinkPage.html
2. Աշխատանքի սոցիալական հարցերի նախարարություն, Զբաղվածության պետական գործակալության տվյալներ
3. Տավուշի մարզի սոցիալական ծառայության տարածքային կենտրոնի տվյալներ
4. Մակրոտնտեսական վերլուծություն՝ կատարվել է «Մոդեքս» ընկերության կողմից հատուկ «ՀՀ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱ 2021» զեկույցի շրջանակներում

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին